

Եթէ դուրսէն իրեն նայիս, կը տեսնես, որ տուն շինող է, թէեւ տունն ի վեր չէ: Իսկ եթէ ներսէն իրեն նայիս, կը տեսնես, որ տունիվեր է, սակայն երբ տունը ուրիշինն է:

Վերջապէս հրաշագործ արարած մըն է մեր ասպետական ՉԷՆԿԻ-լերցին, որ երբեք ոչխարի կաթ չէ խմած, այլ ըմպած է գայլի կամ առիւծի կաթեր: Հակառակ հրաշագործ ըլլալուն՝ անշուշտ, չի կրնար տեղէն շարժել լեռները, թէեւ կրնայ քալեցնել լեռնակուտակ ապրանքներ:

*

Ֆրանսացի գրչակին մէկը անգամ մը Ալֆորվիլ քննական պտոյտի մը գացած ու անհետթեթուրին մը ստորագրած էր: ՉԷՆԿԻ-լերցիները պատասխանեցին գրողին հետեւեալ վերջաբանով.

-Մենք քննուելիքներ չենք, մենք քննողներ ենք: Եկեր որ պետք ըլլայ, մենք քու հոգիդ ու մարմինդ լաւ կը քննենք, ա՛յ օղու, խաս տղայ...

*

Եթէ մէկը ՉԷՆԿԻ-լերցիին հարցնէ իր ուրտեղացի ըլլալը՝ կ'ընդունի հետեւեալ պատասխանը.

-Պրուսացի եմ:

Պատճա՞ռը. համեստութի՛ն: Կ'ուզէ սքօշել իր մեծ համբաւը Պրուսայի թուզի տերեւներուն տակ:

*

Իբրեւ բնորոշ պատկեր՝ կ'ուրուագծեմ երկու փոքրիկ տեսարան, որոնց հանդիսատես եւ ականջալուր եմ եղած:

ՉԷՆԿԻ-լերցի հայր մը իրիկուն մը կ'ըսէր իր տղուն.

-Դպրոցին մէջ Սպարտայի պատմութեան դաս կուտա՞ն:

-Ո՛չ:

-Ատ ինչ անպիտան դպրոց է:

-Չերթամ ալ կ'ըլլայ, հայրիկ:

-Վաղը քեզի դպրոց պիտի չըրկեմ բայց... (ծռեցաւ ու խօսքին մնացեալը ըսաւ տղուն ականջէն):